

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՌՅԱԿ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԳԱՂՏՆԻ  
ՐԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՒՄ  
1915—1916 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Լ. 2. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Առաջին համաշխարհային պատերազմն ամրապնդեց դեմանա-թուրքական համադորժակցությունը և նպաստեց Հայկական հարցի «լուծման» թուրքական ծրագրի որոշակիացմանն ու իրագործմանը: Բացի այդ, այն եկավ նոր «ճրջ-գրրտումներ» մտցնելու Հայկական հարցի լուծման անգլո-ֆրանս-ռուսական մոտեցման մեջ:

Բեռլինի վեհաժողովից հետո մինչև Առաջին համաշխարհային պատերազմը ընկած ժամանակահատվածում Արևմտյան Հայաստանի ու հայության նկատմամբ մեծ տերությունների քաղաքականությունը պայմանավորված էր Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը չխախտելու և անձնոմխելությունը պահպանելու սկզբունքով: Դրա միջոցով նրանք ձգտում էին կանխել որևէ մրցակից պետության՝ նախ և առաջ Ռուսաստանի առաջխաղացումը ցամաքային ճանապարհով դեպի սևծովյան նեղուցներն ու Կոստանդնուպոլիս, ամրապնդել իրենց դիրքերը Մերձավոր արևելքում: Թե՛ Մեծ Բրիտանիայի և թե՛ Ռուսաստանի համար քաղաքական դեպքերի նշանակալի զարգացում էին նախ՝ Թուրքիայի վտարումը Եվրոպայից Բալկանյան պատերազմների արդյունքում, ապա՝ նրա աստիճանական, բայց հստակ կողմնորոշումը դեպի գերմանա-ավստրիական խմբավորում: Մեծ Բրիտանիայի վարչապետ Ասքլիթի բնորոշմամբ՝ «ժամանակի հարց էր, մինչև որ թուրքական կայսրության անկախությունը և փտածությունը Ասիայում ևս նախապատրաստեին նրա անկումը»<sup>1</sup>:

Թուրքիայի մասնակցությունը պատերազմի (գերմանա-ավստրիական խմբավորման կազմում) ցրեց Եռյակ համաձայնության՝ Անտանտի երկրներին՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի վերջին հույսերը Թուրքիայի չեզոքությունն ապահովելու մասին: Նրանք, առանց հապաղելու, մի կողմ դրեցին «Օսմանյան կայսրության տարածքային ամբողջության պահպանման բանաձևը»<sup>2</sup>: Թուրքիան, որպես պատերազմական հակառակորդ, պարտության դեպքում դաշնակիցների կողմից ենթակա էր բաժանման: Թուրքական կայսրության «ժառանգության» բաժանման տեսանկյունից Հայկական հարցը Եռյակ համաձայնության կառավարություններում դիտարկում էին որպես Արևմտյան Հայաստանի բաժանման հարց: Ընդ որում, այն քննարկվում էր Թուրքիայի ասիական տիրույթների ճակատագրին վերաբերող բոլոր հարցերի հետ մեկ ամբողջության մեջ: Անտանտի կառավարություններից յուրաքանչյուրն իր հետաքրքրություններն ուներ ասիական Թուրքիայում, որոնք այ-

<sup>1</sup> Ա. Նասիպյան, Բրիտանիա և Հայկական հարցը 1915—1923, Պելրուի, 1994, էջ 70:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 72:

ժըմ՝ պատերազմական իրադրության պայմաններում, որոշակիացման և համաձայնեցման կարիք էին զգում։ Նրանցից յուրաքանչյուրը շտապում էր զենքի ուժով հաստատել իր իրավունքները Օսմանյան կայսրության ասիական տիրույթներում։ Հենց այստեղ է, որ դրսևորվեցին ներքին հակասությունները ու տարաձայնությունները Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև։ Եվ քանի որ Թուրքիան դեռ պարտված չէր, նրա ասիական տիրույթների բաժանման վերաբերյալ դիվանագիտական ողջ գրագրությունը դաշնակիցների միջև տարվում էր գաղտնի։

Ռուսաստանի արտաքին քաղաքականության գլխավոր խնդիրը Մերձավոր արևելքում Միջերկրական ծով դուրս գալն էր կամ ծովային ճանապարհով, այսինքն՝ գրավելով Կոստանդնուպոլիսը, Բոսֆորի ու Դարդանելի նեղուցները, կամ ցամաքային ճանապարհով, այսինքն՝ ասիական Թուրքիայով։ Այս տարածաշրջանում Ռուսաստանի կարճ ցամաքային ճանապարհը դեպի Միջերկրական ծով անցնում էր Արևմտյան Հայաստանով ու Կիլիկիայով։ Այդ տարածքները Ռուսաստանի համար ոչ միայն բանալի էին դեպի Մերձավոր արևելք, այլև զրահ՝ կովկասյան սահմանների պաշտպանության տեսակետից։ Չնայած խնդրի կարևորությանը, արտաքին գործերի նախարարությունը բացահայտորեն չէր արտահայտվում Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում և սևծովյան նեղուցներում Ռուսաստանի շահերի մասին։ Նա դեռ որոշակիորեն ծանոթ չէր ասիական Թուրքիայում ռուսական պետության դաշնակիցների հետաքրքրություններին և անհանգստանում էր, որ ցարական կառավարությանը հետաքրքրող տարածքների ուղղակի զինագրավման քաղաքականությունը կարող էր առաջ բերել Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի անհաղթահարելի հակազդեցությունը։ Ահա թե ինչու պատերազմի սկզբնական ժամանակահատվածում ռուսական դիվանագիտությունը սևծովյան նեղուցների զինագրավման փոխարեն բարձրացնում էր դրանցով ռուսական ռազմական նավատորմի ազատ ելումուտի ապահովման հարցը<sup>3</sup>, իսկ հայկական խնդրում ձեռնպահ մրնաց վերջնական որոշում կայացնելուց, քանի դեռ քաջատեղյակ չէր Արևմտյան Հայաստանում ու Կիլիկիայում դաշնակիցների հետաքրքրություններին<sup>4</sup>։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրության ասիական տիրույթների բաժանման նախաձեռնությամբ առաջինը հանգեցրելով Մեծ Բրիտանիան, 1914 թ. սեպտեմբերին, երբ Թուրքիան գեռ չէր էլ մտել պատերազմի մեջ<sup>5</sup>։ Մեծ Բրիտանիայում հատուկ շահագրգռություն էին ցուցաբերում թուրքական կայսրության արաբական տարածքների նկատմամբ։ Լոնդոնում դեմ չէին, որ ռուսական բանակը գրավեր Արևմտյան Հայաստանը, բայց չէին կարող թույլ տալ, որ Ռուսաստանը Դիարբեքիրից հարավ տնցներ «Իսայն բնական սահմանն էր, որտեղից Ռուսաստանը կարող էր սպառնալ Պարսից ծոցին», — գտնում էին անգլիացի դիվանագետները<sup>6</sup>։ Այդ տարածաշրջանին տրված կարևորությունը հստակորեն մատնանշված էր «Թուրքիայում

<sup>3</sup> М. Палеолог, Царская Россия во время мировой войны. М., 1991, с. 128.

<sup>4</sup> Международные отношения в эпоху империализма. Документы из архивов царского и Временного правительства, 1878—1917, серия 3 (1914—1917), М.—Л., 1935. т. 6, ч. 1, с. 247.

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 328։

<sup>6</sup> Մշակ, 11.12.1914։



բրիտանական հողային բաղձանքների վերաբերյալ» բրիտանական կառավարության միջնախարարական կոմիտեի կազմած տեղեկագրում: Փաստաթղթում շեշտվում էր այն միտքը, որ Պարսից ժոցում «բացառիկ ու գերագույն դիրքի» հասնելու՝ Բրիտանիայի նկատառումը Արևելքում բրիտանական քաղաքականության «հիմնական» սկզբունքներից մեկն է<sup>7</sup>:

Մեծ Բրիտանիայից քիչ ավելի ուշ Թուրքիայի ասիական տիրույթների բաժանման առաջարկով հանգև սկսվեց Ֆրանսիան: Նա ոչ միայն չէր ցանկանում կորցնել իր կապիտալի տիրապետող գիրքերը Թուրքիայում, այլև հավակնություններ ուներ Սիրիայի և Պաղեստինի նկատմամբ: Թուրքիայի՝ պատերազմի մեջ մանկուց մոտավորապես մեկ ամիս անց՝ նոյեմբերի 21-ին, Պետրոգրադի ֆրանսիական դեսպան Մ. Պալեոլոգը նիկոլայ II-ին հայտնեց Սիրիան ու Պաղեստինը գինադրավելու Ֆրանսիայի մտադրության մասին<sup>8</sup>: Միևնույն ժամանակ մեծբրիտանական ու ֆրանսիական կառավարությունները բանակցություններ էին սկսել Հունաստանի կառավարության ներկայացուցիչների հետ՝ Թուրքիայի դեմ պատերազմին այդ պետության մասնակցության վերաբերյալ՝ դրա դիմաց խոստանալով նրանց փոքրասիական որոշ տարածքներ Իզմիրի հետ միասին<sup>9</sup>: Հուլյանին խոստանալով տարածքներ ասիական Թուրքիայում՝ Հոնդոնում ու Փարիզում միաժամանակ նախապատրաստվում էին Կոստանդնուպոլսի ու նեղուցների գինադրավմանը, որը հեշտացնելու էր Մերձավոր արևելքում նրանց ռազմաքաղաքական ծրագրերի իրագործումը, իսկ Ռուսաստանին ղրկելու էր ազատորեն Միջերկրական ծով դուրս գալու հնարավորությունից: Այդ նպատակով մշակվեց և 1915 թ. սկզբին իրականացվեց Դարդանելի ռազմական գործողությունը, որի ընթացքում անգլո-ֆրանսիական զորքեր ափհանվեց Կոստանդնուպոլսի մատուցներում: Այդ դեպքերն արագացրին Օսմանյան կայսրության ասիական տիրույթների բաժանման հարցի բարձրացումը Նոյակ համաձայնության երկրներում: Հարցն այն է, որ Դարդանելի ռազմական գործողությունը ռուսական կառավարող շրջաններում մտավախություն էր առաջացրել, որ դաշնակիցների հաղթանակի դեպքում նեղուցներն անցնելու էին Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի տրամադրության տակ: Ցարական կառավարությունը որոշեց հանդես գալ Կոստանդնուպոլսի ու նեղուցների ճակատագրի վերաբերյալ հատուկ հայտարարությամբ: 1915 թ. փետրվարի 19 (մարտի 4)-ին արտաքին գործերի նախարար Ս. Սադոունովը հուշագիր հանձնեց Պետրոգրադի ֆրանսիական ու մեծբրիտանական դեսպաններ Մ. Պալեոլոգին ու Զ. Բյուքենենին: Նրանում ասվում էր, որ «Կոստանդնուպոլսի ու նեղուցների հարցը պետք է լուծվի վերջնականորեն՝ Ռուսաստանի դարավոր ձգտումներին համապատասխան», և որ ցանկացած այլ լուծում կլինի անբավարար ու անկայուն: Փաստաթղթում հույս էր հայտնվում, որ դաշնակից կառավարությունները կհարգեն Ռուսաստանի ցանկությունը: Այդ դեպքում ցարական կառավարությունը խոստանում էր բարեխիղճ լինել «Օսմանյան կայսրության մյուս մարզերում ու այլ վայրերում» Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիա-

<sup>7</sup> Ա. Նախալյան, նշվ. աշխ., էջ 123:

<sup>8</sup> М. Палеолог, նշվ. աշխ., էջ 128:

<sup>9</sup> Раздел Азиатской Турции. По секретным документам бывшего Министерства иностранных дел, под ред. Е. А. Адамова. М., 1924, док. №7, с. 110.

յի հավակնությունների նկատմամբ<sup>10</sup>: Փաստորեն, ռուսական կառավարության վճռական դիրքորոշումը ասիական Թուրքիայում անգլիական ու ֆրանսիական ծրագրերի իրականացումը ուղղակի կախման մեջ դրեց նրանց կողմից Կոստանդնուպոլսի ու նեղուցների նկատմամբ Ռուսաստանի հավակնությունների ճանաչումից: Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի կառավարող շրջաններում որոշեցին ընդունել ռուսական պահանջները, իհարկե, որոշակի պայմաններով: 1915 թ. փետրվարի 27-ին (մարտի 12) անգլիական կառավարությունը պատասխան հուշագրով համաձայնեց Կոստանդնուպոլսի ու նեղուցները Ռուսաստանին հանձնել միայն այն պայմանով, որ Կոստանդնուպոլսի հայտարարվեց բաց քաղաք. իսկ նեղուցներն անարգել բացվեին բոլոր երկրների ազատ նավագնացության համար, որ Ռուսաստանը ճանաչեց Մեծ Բրիտանիայի հավակնությունները մահմեդական սուրբ վայրերի ու Արաբիայում ստեղծվելիք անկախ մահմեդական պետության նկատմամբ<sup>11</sup>:

Ֆրանսիական կառավարությունը ես շուտով դաշնակիցներին հայտնեց Թուրքիայի ասիական տիրույթների վերաբերյալ իր սկզբնական պահանջները: Դրանք ձևակերպված էին Պետրոգրադում ֆրանսիական դեսպան Մ. Պալեոլոգի նամակում, որը նա 1915 թ. մարտի 1/14-ին հասցեագրել էր Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ս. Սազոնովին: Դեսպանը նշում էր, որ Ֆրանսիան ձգտում է «զինագրավել Սիրիան, ներառյալ Ալեքսանդրիայի ծովածոցի շրջանը և Կիլիկիան՝ մինչև Տավրոսյան լեռնաշղթան»<sup>12</sup>: Երկու օր անդ ֆրանսիական դեսպանը հաղորդեց ռուսական ցարին, որ իր կառավարությունը «Սիրիա» անվան ներքո ընդգրկում է նաև Պաղեստինը<sup>13</sup>: Ֆրանսիական կառավարության դիրքորոշումը Կոստանդնուպոլսի ու նեղուցների հարցի վերաբերյալ որոշակիացվեց 1915 թ. մարտի 28/ապրիլի 10-ի հուշագրում, որը Պետրոգրադի ֆրանսիական դեսպանությունը հանձնեց Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ս. Սազոնովին: Փաստաթղթում ֆրանսիական հանրապետության կառավարությունը պաշտոնապես հայտնում էր, որ կհամաձայնի պատերազմի հաղթական ավարտից հետո Կոստանդնուպոլսի ու նեղուցները հանձնել Ռուսաստանին այն դեպքում, եթե Ֆրանսիան ու Անգլիան իրականացնեն իրենց ծրագրերը Արևելքում և երկրագնդի այլ վայրերում<sup>14</sup>: Այս հուշագիրն ամբողջացրեց Եռյակ համաձայնության տերությունների՝ Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև Կոստանդնուպոլսի ու նեղուցների վերաբերյալ 1915 թ. մարտ-ապրիլին ստորագրված համաձայնագիրը:

Այսպիսով, հենց սկզբից՝ նեղուցների խնդրի հետ միասին առաջ քաշվեց ասիական Թուրքիայի բաժանման հարցը, որի բաղկացուցիչ մասն էր կազմում Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի ապագայի խնդիրը: Ընդ որում, ակն-

<sup>10</sup> Նույն տեղում, փաստաթուղթ № 16, էջ 118—119, Сборник договоров России с другими государствами (1856—1917 гг.). Под ред. Е. А. Адамова и И. В. Козьменко, М., 1952, с. 428—429.

<sup>11</sup> Раздел Азиатской Турции..., док. № 23, с. 125—127.

<sup>12</sup> Նույն տեղում, փաստաթուղթ № 24, էջ 127:

<sup>13</sup> Международные отношения в эпоху империализма..., серия 3-я, т. 8, ч. 1, с. 254, прим. 2.

<sup>14</sup> Сборник договоров России с другими государствами..., с. 435.



հայտ էր, որ ռուսական հավակնությունների գլխավոր մրցակիցը Ֆրանսիան էր<sup>15</sup>,

Կիլիկիայի ու Պարսից ծոցի շրջանում հարավային ծովերը դուրս գալու ուղիներն իր աղղկացության ներքո պահելու, Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի նկատմամբ իր դաշնակիցների հետաքրքրությունները զգուշորեն շոշափելու, միաժամանակ, նշված տարածքների ուղղակի զինագրավման հնարավորությունը պարզելու նպատակով ռուսական կառավարությունը մշակեց թուրքական պետության սահմաններում Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի հովանավորությամբ հայկական վեց վիլայեթների (Վանի, Էրզրումի, Սևրաստիայի, Բիթլիսի, հարբերդի, Դիարբեքի) և Կիլիկիայի (ամիջերկրածովյան Մերսին նավահանգստով հանդերձ, բացառությամբ Ալեքսանդրեթի ծովածոցի՝ Յումուրթալիքով) տարածքում ինքնավար Հայաստանի ստեղծման ծրագիրը։ Այն հիմնված էր 1913 թ. Կոստանդնուպոլսում Ռուսաստանի առաջարկած բարենորոգումների նախագծի վրա<sup>16</sup>։ Եթե ռուսական կառավարության համար այն միջոց էր Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի տարածքով ապահովելու Ռուսաստանի ելքը դեպի Միջերկրական ծով, ապա հայույթյան համար այդ ծրագիրն ազգային իղձերի իրականացման հիմք կարող էր դառնալ։ Հետևաբար, հայ գործիչները կարող էին ջերմորեն այն պաշտպանել։ Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունը, Պետրոգրադում հայկական ներկայացուցիչների հետ գաղտնի բանակցություններից հետո, Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի ինքնավարության ծրագիրը և հատկապես հայկական վեց վիլայեթներին Կիլիկիայի միացման գաղափարը Ֆրանսիայի ու Մեծ Բրիտանիայի կառավարությունների առջև պաշտպանելու գործը դրեց հայերի վրա։ Նախատեսվեց հայերից իրենց գամավորներ ուղարկել Անդլիա և Ֆրանսիա՝ «նախարարությունն իր օգնությունը խոստացավ նրանց Լոնդոնի և Փարիզի իր դեսպանների միջոցով՝ լուրջ դժվարության դեպքում, ինչպես նաև այն ժամանակ, երբ իրենք՝ դեսպանները, դա հարկավոր համարեն», — 1915 թ. մայիսին Հայկական աղգային Կատարի-րակության նախագահ, եգիպտահայ մեծահարուստ Պողոս Նուբարին էր գրում Պետրոգրադի ծրագրի քննարկումներին քաջածանոթ Հայ հեղափոխական դաշնակցության լիդերներից ռուսահայատակ բժիշկ Հ. Զավրիյանը<sup>17</sup>։ Փաստաթղթերը վկայում են, որ ռուսական կառավարությունը խուսափեց իր իսկ ներկայացրած ծրագրի վերաբերյալ լուրջ երաշխիքներ տալուց և եվրոպական կառավարությունների առջև բացահայտորեն պաշտպանելուց, որովհետև տեղյակ էր Կիլիկիայի, Մերսին նավահանգստի ու նրա շրջակա տարածքների ներկատմամբ Ֆրանսիայի հավակնություններին<sup>18</sup>։

<sup>15</sup> «Հայաստանի ավտոնոմիան» և Անտանտան, Վալերադրեր իմպերիալիստական պատերազմի շրջանից, Առաջ Հովհաննիսյանի առաջարկումով. Ե., 1926, փաստաթուղթ № 4, էջ 5.

<sup>16</sup> Նույն տեղում, փաստաթուղթ № 14, էջ 10։ Տե՛ս նաև Boghos Nubar's Papers and the Armenian Question 1915—1918. Documents. Edited and translated by Vatche Ghazaryan, Waltham, 1996, doc. № 8, p. 19—20.

<sup>17</sup> Հայաստանի Հանրապետության Պատմության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՊԱԿ), ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 87, Boghos Nubar's Papers..., doc. № 8, p. 20.

<sup>18</sup> «Հայաստանի ավտոնոմիան» և Անտանտան..., փաստաթուղթ № 14, 15, էջ 11; № 16, էջ 12, Տե՛ս նաև Boghos Nubar's Papers..., doc. № 8, p. 19—20.

Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության հանձնարարությամբ 1915 թ. ապրիլին Փարիզ, իսկ մայիսին այնտեղից Լոնդոն մեկնեցին Հ. Զավրիյանը և Ա. Ղուկասյանը<sup>19</sup>։ Միևնույն ժամանակ, Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ V-ից «Անգլիայի ու Ֆրանսիայի կառավարությունների արս։ Զայաստանի ինքնավարության ծրագիրը պաշտպանելու» հանձնարարություն ստացավ Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան<sup>20</sup>։ Նրան Հ. Զավրիյանը Փարիզում հանգամանորեն տեղեկացրեց Պետրոգրադի քննարկումների և ծրագրի մասին<sup>21</sup>։ Հայ գործիչների նպատակն էր՝ Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի կառավարություններն ու հանրային կարծիքը տրամադրել հօգուտ հայության բաղձանքների իրականացման, միջազգային հանրությանը «բացատրել, որ թուրքական կառավարությունը վեց վիլայեթների և Կիլիկիայի հայությանը կոտորածով ու զանգվածային աքսորներով բռնաջնջելու նպատակ է հետապնդում»<sup>22</sup>։ Հայ գործիչները տեսակցություններ ունեցան Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Դելկասեի, Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարության պետքարտուղարի օգնական Արթուր Նիքոլսոնի, լորդ Բրայսի, լորդ Լենսթոնի, անգլիական ու ֆրանսիական խորհրդարանների բազմաթիվ անդամների, քաղաքական գործիչների, ակադեմիկոսների և լրագրողների հետ<sup>23</sup>։ Հանգիպումները ցույց տվեցին, որ եվրոպական կառավարությունների իրական շահերը չէին համապատասխանում հայկական վեց վիլայեթների և Կիլիկիայի տարածքում ինքնավար Հայաստանի ստեղծման ծրագրին։ «Ասիական Թուրքիայի բաժանման դեպքում Ֆրանսիան կպահանջի Սիրիան և Կիլիկիան մինչև Տավրոս։ Նրանք ապացուցում են, որ, քանի որ Կոստանդնուպոլիսը Դարգանելի հետ միասին, որի քաղաքական ու տնտեսական կարևորությունը վեր է կասկածից, անցնում է Ռուսաստանին, ապա՝ Ֆրանսիան չի կարող բավարարվել միայն Սիրիայով, քանի որ վերջինս հարուստ երկիր է։ Հետևաբար, նրանք լրջորեն շահագրգռված են Կիլիկիայով»։ — Փարիզից կաթողիկոս Գևորգ V-ին էր տեղեկացնում Պողոս Նուբար փաշան 1915 թ. հունիսի 17-ին<sup>24</sup>։

Հ. Զավրիյանը դեռևս 1915 թ. մայիսին Փարիզի, իսկ Պողոս Նուբարը հունիսին Լոնդոնի ռուսական դեսպաններին Հայկական հարցի մասին զեկուցագրի ներկայացրեցին՝ ակնկալելով նրանց աջակցությունը ինքնավար Հայաստանի ու Կիլիկիայի ստեղծման ծրագրին<sup>25</sup>։ Բայց ռուսական դիվանագետները խուսափեցին հայ գործիչներին որոշակի երաշխիքներ տալուց, հատկապես ասլուդա ինքնավար Հայաստանին Կիլիկիան միացնելու հայերի ցանկությունը

<sup>19</sup> 22 ՊՊԿԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 86։

<sup>20</sup> Նույն տեղում, գ. 27, թ. 34—35; գ. 28, թ. 185։

<sup>21</sup> Նույն տեղում, գ. 19, թ. 86—87, տե՛ս նաև Boghos Nubar's Papers..., doc. № 67, p. 109; doc. № 108, p. 183; doc. № 156, p. 268—270։

<sup>22</sup> 22 ՊՊԿԱ ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 44։

<sup>23</sup> Նույն տեղում, թ. 42։

<sup>24</sup> Boghos Nubar's Papers..., doc. № 67, p. 109։

<sup>25</sup> Հ. Զավրիյանի զեկուցագրի ամբողջական բովանդակությունը տե՛ս Международные отношения в эпоху империализма..., серия 3-я (1914—1917), т. 7, ч. 2, М.—Л., 1935, док. № 765, с. 455—458։ Պողոս Նուբարի զեկուցագրի ամբողջական բովանդակությունը տե՛ս Boghos Nubar's Papers..., doc. № 93, p. 152—154; Տե՛ս նաև Раздел Азиатской Турции..., док. № 45, с. 138—139։



դիրքորոշմանը<sup>26</sup>: Դեռևս 1915 թ. հունիսի 3/16-ին Ս. Սազոնովն այն մեկնաբանել էր հետեյալ կերպ. «Ռուսաստանի, Ֆրանսիայի ու Անգլիայի եռակի հովանավորության ներքո ինքնավար Հայաստանի սահմաններից Կիլիկիան Ադանայով ու Մերսինով հանդերձ հանելը տեղի ունեցավ մեր այն ցանկության շնորհիվ, որով ուղղում էինք մեր կանխահաճ վերաբերմունքը ցուցադրել Ֆրանսիայի այն հավակնությունների նկատմամբ, որ ունի այս տարածքի վերաբերմամբ: Իսկ եթե հայ պատվիրակներին կհաջողվի Փարիզի կառավարությանը հակել Կիլիկիան ապագա հայկական մարդի մեջ մտցրնելու կողմը, ապա կայսերական կառավարությունը կարող է համակրություն տա՞նք տաճկահայերի ցանկությունների իրագործման նկատմամբ»<sup>27</sup>: Ռուսական կառավարող շրջաններում ու դիվանագիտության մեջ հայկական տարածքների ասլաֆայի նկատմամբ նման երկակի մոտեցումը բացատրվում էր հայերի նկատմամբ ռազմաքաղաքական իրադրությունից չբխող որևէ կոնկրետ պարտավորություն չստանձնելու անհրաժեշտությամբ: Պետրոգրադում մագիր չէին Կիլիկիայի նպատեմանը սրել հարաբերությունները Փարիզի հետ: Ուստի հայ դործիչները ստիպված էին ուղղակի դիմել Ֆրանսիական ու անգլիական կառավարող շրջաններին: Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի ինքնավարության ծրագիրը Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության հավանության արժանացնելու նպատակով Պողոս Նուբարը արտաքին գործերի նախարար Դեյկասին ներկայացրեց հուլիսի «Հայկական հարցի մասին», որն Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի ինքնավարության ծրագրի և ասիական Թուրքիայում Ֆրանսիական ազդեցության ոլորտներն ապահովելու փոխդիվանային տարբերակ էր: Ըստ այդ տարբերակի, առաջարկվում էր Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի ու Ռուսաստանի վերահսկողության և հովանավորության ներքո ստեղծել ինքնավար Հայաստան՝ կազմված հայկական վեց վիլայեթներից և Արևմտյան Կիլիկիայից ելքով Միջերկրական ծով, իսկ Կիլիկիայի մյուս մասերը հանձնել Ֆրանսիային՝ ինքնավար Հայաստանի հարևանությամբ ըստեղծելով ինքնավար Քրդստան՝ Ֆրանսիայի հովանավորության ներքո<sup>28</sup>: Այդ ծրագրի իրագործման դեպքում ինչ-որ չափով կլուծվեր հայության ազգային միասնության ցավոտ խնդիրը, Ռուսաստանը Արևմտյան Հայաստանով ու Կիլիկիայով կստանար իր համար կենսականորեն անհրաժեշտ ելքը դեպի Միջերկրական ծով: Բայց Ֆրանսիան չէր կարող ու չհամաձայնեց Կիլիկիայի թեկուզ արևմտյան մասը կորցնելու տարբերակին<sup>29</sup>:

Իսկ Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարության պետքաբարության օգնական Ա. Նիքոլսոնի հետ հանգիստ մամանակ Պողոս Նուբարը, Կիլիկիայի ճակատագրով մտահոգ, առաջարկեց Եռյակ համաձայնության գործերի մի մասը ափհանել Կիլիկիայում, Մերսինի ու Ալեքսանդրեթի նավահանգիստներում, նրանց օգնությամբ զինել Կիլիկիայի հայությանը՝ թուրքական կառավարության կողմից իրականացվող ազգային ճնշումները, տեղահա-

<sup>26</sup> Նույն տեղում, փաստաթուղթ № 40, էջ 135, 136; № 45, էջ 138—139:

<sup>27</sup> «Հայաստանի ավտոնոմիան» և Անտանտան..., փաստաթուղթ № 17, էջ 12:

<sup>28</sup> Boghos Nubar's Papers..., doc. № 35, p. 63; № 42, p. 71. Раздел Азиатской Турции..., док. № 43, с. 138.

<sup>29</sup> С. М. Акопян, Западная Армения в планах империалистических держав в период первой мировой войны. Ер., 1967, с. 205.

պաշտպանելուց, որովհետև հետևում էին արտաքին գործերի նախարարության նույնպիսի ու կոտորածները կանխելու նպատակով<sup>30</sup>: Նա համոզված էր, որ «դաշնակից պետությունների գործերի ներկայության շնորհիվ, մի կողմից՝ տեղի հայության կյանքը, պատիվը և ունեցվածքը կարելի էր ապահովել, թուրքերին չեզոքացնել, մյուս կողմից՝ հայկական ապստամբական շարժումով ավելացնել Կիլիկիայի նկատմամբ հայության ազգային բաղձանքների կշիռը»<sup>31</sup>: Բայց Նույակ համաձայնության տերություններն առաջնորդվում էին նեղ պետական շահի թելադրանքով: Ժիշտ է, նրանք տեղյակ էին հայության բնաշնչման թուրքական ծրագրին, 1915 թ. մայիսի 24-ին հանդես էին եկել այն դատապարտող համատեղ հայտարարությամբ և գիտակցում էին, որ Կիլիկիայում ու Արևմտյան Հայաստանում իրենց գործողությունների ուղացումը կարող է վտանգել հայության գոյությունը, այնուամենայնիվ, շնչվեցին իրենց համար առաջնային պետական խնդիրներից: Արտահայտելով հարցին Նույակ համաձայնության տերությունների ընդհանուր մոտեցումը՝ Ա. Նիքոլսոնը Պողոս Նուբարին պատասխանեց, որ Կիլիկիայում դաշնակից ղորքերի փոհանումըն անհնար է: «Մենք արդեն գերծանրաբեռնվել ենք», — ասաց նա, — «որքան նոր գործողություն կարող ենք մեղ վրա վերցնել: Դարդանելի գործողությունը ներկայումս խլում է մեր բոլոր ուժերը, որոնք Դաշնակիցներն ընդհանրապես ի վիճակի են տրամադրել այդպիսի մի ծրագրի»<sup>32</sup>: Ընդհակառակն, Փարիզում, իսկ պատերազմի ավարտական փուլում նաև Լոնդոնում ֆրանսիական ու անգլիական քաղաքագետները և դիվանագետներն իրենք էին ձգտում օգտագործել հայկական մարդուժը թուրքական ռազմաճակատի սիրիական հատվածում, Միջագետքում ու Պարսկաստանում: Ահա թե ինչու հայկական վեց վիլայեթների ու Կիլիկիայի տարածքում ինքնավար Հայաստանի ստեղծման շուրջ հայ գործիչների հետ տարվող բանակցություններում Ֆրանսիայի ու Անգլիայի արտաքին գործերի նախարարությունների աշխատակիցները, թեև խուսափում էին Հայկական հարցում գործնական խոստումներից, բայց, միաժամանակ, ջանում էին չհիասթափեցնել Պողոս Նուբարին ու Հ. Զավրիյանին<sup>33</sup>: Չէ՞ որ անհրաժեշտության դեպքում նրանք կարևոր դեր կարող էին ունենալ Դաշնակիցների բանակներին հայկական մարդուժի զինվորագրման գործում: Ինչ վերաբերում է ինքնավար Հայաստանի ստեղծմանը, ապա Լոնդոնում այն դիտում էին որպես «Կովկասում բանսարկություններ անող երկրորդ Բուլղարիայի րստեղծում» և ռուսական դաշնակցի հետ դիվանագիտական դժվարություններից խուսափելու նպատակով հայերի հետ բանակցությունները կախման մեջ էին դնում ապագա ինքնավար Հայաստանի սահմաններում Կիլիկիան ընդգրկելու հարցում ֆրանսիական դիրքորոշման ճշգրտումից<sup>34</sup>: Իսկ ֆրանսիական կառավարությունը մտադիր չէր հրաժարվել Կիլիկիայի նկատմամբ հավակնություններից: Ուստի և եվրոպական կառավարությունների՝ հայ գործիչներին տրված

<sup>30</sup> Boghos Nubar's Papers..., doc. № 90, p. 142.

<sup>31</sup> ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 45:

<sup>32</sup> Boghos Nubar's Papers..., doc. № 90, p. 142.

<sup>33</sup> Международные отношения в эпоху империализма..., серия 3-я (1914—1917), т. 8, ч. 1, док. № 371, с. 478. Boghos Nubar's Papers..., doc. № 35, p. 63. Кавказское слово, Тифлис, 29, IX, 1916.

<sup>34</sup> «Հայաստանի ավտոնոմիան» և Անտանտան..., փաստաթուղթ № 42, էջ 27:



խոստումները չէին կարող ու չպետք է անցնեին «ակադեմիական զրույցներից»՝ այն կողմ:

Ինքնավար Հայաստանի ստեղծման մեկ ուրիշ տարբերակ էր թուրքական հովանավորության ներքո հայկական ինքնավարության ծրագիրը, որը 1915 թ. աշնանը Եռուկա համաձայնության տերությունների դիվանագիտական քննարկումների առարկա դարձավ Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության նախաձեռնությամբ ն. Ն. Զավրիյանի միջոցով: Այն ասիական Թուրքիայում նոր սուլթանի՝ Զեմալի ժառանգական իշխանության ներքո Սիրիայի, Պաղեստինի, Միջագետքի, Արաբիայի, Կիլիկիայով հանդերձ Հայաստանի, Քրդստանի ինքնավար նահանգներից կազմված միապետության ստեղծման ընդարձակ ծրագրի բաղկացուցիչ մասն էր: Ծրագրի հիմքում Թուրքիայի ռազմածովային նախարար, թուրքական շորորոգ բանակի հրամանատար Զեմալ փաշայի և էնվերի ու Թալեաթի միջև ծագած տարաձայնություններն էին<sup>36</sup>, որոնք Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունում դիտում էին իբրև միջոց՝ Կոստանդնուպոլսի ու նեղուցների խնդիրը Ռուսաստանի պետական շահերին համապատասխան լուծելու համար<sup>37</sup>: Փարիզում ու Լոնդոնում շրջանցող Զեմալի հետ նախատեսվող համաձայնագիրը, որովհետև դրանով Ռուսաստանը կստանար Կոստանդնուպոլսի ու նեղուցները, իսկ իրենք՝ ոչինչ՝ «թուրքական ժառանգությունից»: Ինչ վերաբերում է ծրագրի «հայանպաստ» պայմաններին, ապա արևմտահայության պանդխտային տեղահանությունից ու կոտորածներից, Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի հայաթափումից հետո, այն էլ թուրքական նոր սուլթանի իշխանության պայմաններում, դրանք անիրականանալի էին, հետևաբար՝ անհեռանկար: Այդ առաջարկները լուր միջոց էին ոռոսական և նրա եվրոպական դաշնակից կառավարությունների համար՝ օգտագործելու հայ գործիչների կապերն ու հնարավորությունները Զեմալի հետ իրենց և, միաժամանակ, միմյանց միջև բանակցություններում: Հայկական հարցը խաղաքարտ էր տերությունների համար՝ հասնելու իրենց ծրագրերի իրականացմանը: Հարցն այն է, որ դեռևս 1915 թ. նոյեմբերի 23-ից մեծերիտանական ու ֆրանսիական կառավարությունների միջև ոռոսական դաշնակցից անջատ բանակցություններ էին սկսվել Թուրքիայի ասիական տիրույթների բաժանման շուրջ: 1916 թ. հունվարի 3-ին դրանց արդյունքում կայացավ նախնական համաձայնություն<sup>38</sup>: Հստ համաձայնագրի նախագծի, որի հեղինակներն էին Բեյրութի ֆրանսիական նախկին գլխավոր հյուպատոս Ֆրանսուա Ժորժ Պիկոն և մեծերիտանական կառավարության արտակարգ լիազոր ներկայացուցիչ, Մերձավոր արևելքի փորձագետ Մարկ Սայքսը (նա անգլո-ֆրանսիական բանակցություններում փոխարինել էր Ա. Նիբոլսոնին)<sup>39</sup>, Թուրքիայի ասիական տիրույթները, բացառությամբ Արևմտյան Հայաստանի՝ Ռուսաստանին սահմանակից հյուսիսային մասի, բաժանվում էին հինգ դոտիների: Ֆրանսիային էին անցնելու Արևմուտ-

<sup>36</sup> Նույն տեղում, փաստաթուղթ № 15, էջ 11; № 19, էջ 14.

<sup>37</sup> Раздел Азиатской Турции..., док. №50, с. 141—142.

<sup>38</sup> Նույն տեղում, փաստաթուղթ № 52, էջ 142—143.

<sup>39</sup> Yusuf Hikmet Bayur, Türk inkilabi tarihi, cilt II, Kisim IV.

<sup>39</sup> «Հայաստանի ավտոնոմիան» և Անտանտան..., փաստաթուղթ № 39, էջ 26, С. М. Акопян, նշվ. աղբ., էջ 211.

յան Հայաստանի մեծ մասը՝ Փոքր Հայքով, Կիլիկիան, Արևմտյան Սիրիան, Լիբանանը, Այնթապը, Ուրֆան, Մարդինը, Դիարբեքիրը և Հեքիարի մարզը։ Արևելյան Սիրիան և Նոսուլի նավթառատ վիլայեթը դառնալու էին Ֆրանսիայի ազդեցության ոլորտ։ Մեծ Բրիտանիային անցնելիք տարածքներն ու ազդեցության ոլորտներն ընդգրկում էին արաբական վիլայեթները և որևէ կերպ չէին առնչվում հայկական տարածքների խնդրին<sup>40</sup>։ Ոչ Մեծ Բրիտանիան և ոչ էլ Ֆրանսիան չէին կարող իրենց ռուսական դաշնակցից ևրկար ժամանակով թաքցնել անգլո-ֆրանսիական անջատ բանակցությունների արդյունքները, քանի որ կովկասյան ռազմաճակատում ռուսական բանակի հաղթանակները 1916 թ. գարնանը սպառնում էին ոչ միայն, ըստ համաձայնագրի նախագծի, Արևմտյան Հայաստանում Ֆրանսիային անցնելիք տարածքներին, այլև ռուսական բանակը կառուցելու հասցնել Կիլիկիայի, Սիրիայի և Իրաքի սահմաններին։

1916 թ. փետրվարի 25 (մարտի 9)-ին անգլո-ֆրանսիական համաձայնագրի բովանդակության հաղորդումը որպես անակնկալ ընդունեց ռուսական կառավարությունը։ Նա դժգոհ էր, որ անգլո-ֆրանսիական նախագծով Ռուսաստանի հարավային սահմանագծի մեծ երկայնության վրա՝ Ուրմիա լճից և Վանից, Բիթլիսից, Մուշից ու Խարբերդից դեպի արևմուտք և հարավ՝ Տավրոսի ու Անտիտավրոսի լեռնաշղթաների վրայով դեպի Անամուր, հայտնվելու էր եվրոպական մեծ, թեկուզև դաշնակցի տերություն՝ Ֆրանսիան, և անկյունով մխրճվելու ռուս-պարսկական սահմանագծի մեջ<sup>41</sup>։ Ժիշտ է, տեղագրական տեսանկյունից այդ սահմանը «բավական բնական էր, որովհետև ընթանում էր ղլխավոր լեռնազանգվածի ուղղությամբ, սակայն քաղաքական ու ռազմագիտական կշռադատությունների տեսակետից», արտաքին գործերի նախարար Ս. Սադոունի համոզմամբ, «այն հազիվ թե կարելի էր ընդունելի համարել»<sup>42</sup>, որովհետև Ֆրանսիային էր վերապահում Ուրմիա լճի հյուսիսային առափնյա տարածքներն ու Բիթլիսի լեռնանցքները և սեպի նման մխրճվում ռուս-պարսկական սահմանագծի մեջ՝ վերոհիշյալ լճի մոտերքում։

Հայկական տարածքների շուրջ ռուս-ֆրանսիական տարաձայնությունը հարթելու միջնորդությամբ հանդես եկան անգլիացիները։ Նրանք առաջարկեցին Ուրմիա լճի առափնյա տարածքները և Բիթլիսի լեռնանցքները Ռուսաստանին զիջել՝ դրա դիմաց ռուսական զինագրավման գոտու Սեբաստիա-Խարբերդ-Կեսարիա աշխարհազորական եռանկյունին միացնելով Ֆրանսիային կրցվելիք տարածքներին<sup>43</sup>։ Անգլիական առաջարկով Արևմտյան Հայաստանը բաժանվում էր գրեթե իրար հավասար երկու մասի, որոնցից մեկն անցնելու էր Ֆրանսիային, մյուսը՝ Ռուսաստանին։ Ընդ որում, Ֆրանսիային անցնելիք հայկական տարածքների մեջ անգլիացի զիվանագետները նկատի էին առել նաև պատմական Փոքր կամ Հռոմեական Հայաստանը (Armenia Romana)։ Իսկ

<sup>40</sup> Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828—1923), Զ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, Ե., 1972, փաստաթուղթ № 221, էջ 381—384։ Տե՛ս նաև Մ. Արզումանյան, Հայաստան, 1914—1917, Ե., 1969, էջ 674։

<sup>41</sup> Yusuf Hikmet Bayur, նշվ. աշխ., էջ 82—83։

<sup>42</sup> «Հայաստանի ավտոնոմիան» և Անտանտան..., փաստաթուղթ № 43, էջ 30։

<sup>43</sup> С. М. Акопян. նշվ. աշխ., էջ 213։



Ռուսաստանին անցնելիս տարածքներն ընդգրկում էին պատմական Հայաստանի այն նահանգները, որոնք բյուզանդական ժամանակաշրջանում գտնվել էին սլավոնական տիրապետության ներքո:

Անդրիական առաջարկի դրույթներինց Լինկոլն<sup>45</sup> 1916 թ. մարտի 4/17-ին Ռուսաստանի արտաքին դոմինիոն նախարար Ս. Սադոունովը Պետրոգրադի մեծ-բրիտանական ու ֆրանսիական դեսպաններին՝ Զ. Բյուքենենին և Մ. Պալեոլոգին հայտնեց իր կառավարության դիրքորոշումը, այն է՝ Ֆրանսիային զիջել Գոբրո Հայաստանի՝ Սեբաստիայի, Խարբերդի ու Կեսարիայի միջև ընկած տարածքը և հավանություն տալ անգլո-ֆրանսիական համաձայնագրի մյուս հատվածներին միայն այն դեպքում, երբ Ռուսաստանին անցնեն Կոստանդնուպոլիսն ու նեղուցները, Բիթլիսի լեռնանցքները, Ուրմիա լճի հարակից շրջանները, Սև ծովի հարավային ափը, իսկ Պադեստինում ապահովված լինեն ուղղափառ Լեկզեցու իրավունքները<sup>46</sup>։ Ֆրանսիական կառավարությունը համաձայնեց ոռոտական արտաքին գործերի նախարարությունն առաջարկած փոփոխություններին<sup>47</sup>։

Ի վերջո, 1916 թ. ապրիլի 13/26-ին Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սադոունովի և Պետրոգրադի ֆրանսիական դեսպան Մ. Պալեոլոգի միջև հուլազարդի փոխանակման ձևով ստորագրվեց ռուս-ֆրանսիական համաձայնագիր, որով ռուսական կառավարությունը միացավ անգլո-ֆրանսիական համաձայնագրին<sup>48</sup>։ Ռուս-ֆրանսիական համաձայնագրով պատմական Հայաստանի հողերը նոր մասնատման ենթարկվեցին. Ռուսաստանին անցան նրան սահմանակից էրզրումի և Վանի վիլայեթները, Տրապիզոնի ու Բիթլիսի վիլայեթների արևելյան մասերը, ինչպես նաև Դիարբեքի, Խարբերդի և Սեբաստիայի վիլայեթների ծայրամասային ոչ մեծ հատվածները։ Վերջիններիս տարածքի մնացած մասը, Բիթլիսի վիլայեթի արևմտյան հատվածը Կիլիկիայի և նրան հարակից շրջանների հետ միասին հաղվում՝ Այնթապ-Մարդին, հյուսիսում՝ Ալա-Դադ-Կեսարիա-Ակ-Դադ-Իլդիդ-Դադ-Ջարա-Ակն-Խարբերդ գծով տրվեցին Ֆրանսիային։ Արևմտյան Հայաստանի մեծ մասը ճանաչվեց ռուսական ազդեցության ոլորտ։ Թուրքական կայսրության «ժառանգություն»՝ Ռուսաստանին անցած տարածքներում ցարական կառավարությունը ճանաչեց Ֆրանսիայի տնտեսական իրավունքներն ու արտոնությունները, որոնք ֆրանսիական կառավարությունը ապահովել էր սուլթանական կառավարության հետ ստորագրած պայմանագրերով ու համաձայնագրերով։ Սրանով էլ ավարտվեցին Եռյակ համաձայնության տերությունների ներկայացուցիչների պետրոգրադյան գաղտնի բանակցությունները։

1916 թ. ապրիլի 13/26-ի ռուս-ֆրանսիական համաձայնագրով, մայիսի 9—16-ին անգլիական ու ֆրանսիական կառավարությունների կողմից Մարկ Սալքսի և Ժորժ Պիկոյի կազմած համաձայնագրի նախագծի պաշտոնական ընդունմամբ<sup>49</sup>, ինչպես նաև մայիս-օգոստոսին ստորագրված անգլո-ռուսական

<sup>45</sup> «Հայաստանի ավտոնոմիան» և Անտանտան..., փաստաթուղթ № 43, էջ 31. № 45, էջ 32.

<sup>46</sup> Նույն տեղում, փաստաթուղթ № 55, էջ 38—39.

<sup>47</sup> Նույն տեղում, փաստաթուղթ № 60 և 61, էջ 50—53.

<sup>48</sup> Ասիական Թուրքիայի մասնառումն վերաբերյալ անգլո-ֆրանսիական համաձայնագրերի զիջանդիտությունն սլավոնական միջ հայտնի է Սայքո-Պիկոյի համաձայնագրի անվամբ։

Համաձայնագրով Եռյակ Համաձայնության կառավարությունները վերջնականորեն ձևակերպեցին Թուրքիայի ասիական տիրույթների, այդ թվում՝ Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի բաժանումը:

1917 թ. ապրիլին Անտանտի երկրների զաղտնի Համաձայնագրերին միացավ նաև Թուրքիայի դեմ պատերազմի մեջ մտած Իտալիան, որին խոստացվեցին բուն Անատոլիայի հարավային և հարավ-արևմտյան հատվածները: Այնպես որ, Իտալիայի ներկայությունը փոփոխություն չմտցրեց Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի բաժանման բարտեզի մեջ:

Այսպես, սկսելով Արևմտյան Հայաստանին և Կիլիկիային ինքնավարություն տալու ծրագրից՝ անգլիական, ֆրանսիական և ռուսական կառավարող շրջաններում հանգեցին նրանց զինագրավմանն ու բաժանմանը: 1915—1916 թթ. Անտանտի տերությունների ներկայացուցիչների հետ հայ գործիչների հանդիպումները ցույց տվեցին, որ Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի ինքնավարության ծրագրերը դաշնակիցների համար միջոց էին շոշափելու միմյանց իրական նպատակներն ասիական Թուրքիայում: Համաձայնագրերը բացահայտեցին, որ հաղթանակի դեպքում դաշնակիցները հայկական ոչ մի տարածք չէին թողնելու Թուրքական իշխանության տակ: Ճիշտ է, համաձայնագրերը հայերի ազգային նպատակներն ամբողջապես չէին բավարարելու, բայց դրանք, նրանց գոնե երաշխավորում էին խաղաղություն, անձի և ունեցվածքի ապահովություն:

## АРМЯНСКИЙ ВОПРОС В СЕКРЕТНЫХ ПЕРЕГОВОРАХ И СОГЛАШЕНИЯХ СТРАН ТРОЙСТВЕННОГО СОГЛАСИЯ В 1915—1916 ГГ.

Л. Г. ОГАНЕСЯН

### Резюме

Первая мировая война, которая велась за передел мира, сыграла роковую роль в судьбах армян Западной Армении и Киликии.

Определилась Восточная политика стран Тройственного соглашения. На ее повестке встал вопрос о разделе «наследия» турецкой империи. В марте—апреле 1915 г. между Россией, Великобританией и Францией было достигнуто соглашение о Константинополе и черноморских проливах, по которому союзники взаимно признавали притязания друг друга в азиатской Турции. Но вопрос о разделе Западной Армении и Киликии стал причиной разногласий между Россией и Францией.

В результате длительных переговоров в апреле—августе 1916 г. были подписаны русско-французское, англо-французское и англо-русское тайные соглашения, согласно которым державы Тройственного соглашения окончательно оформили раздел азиатских владений Турции, в том числе Западной Армении и Киликии. По этим соглашениям большая часть Западной Армении переходила в сферу российского влияния, а остальные ее территории и Киликия—Франции.